ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07-ը հուլիսի 2023թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան /բացակայում էր/,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի պետ Ա. Նազարյան,
ՀՀ ՀՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ բաժնի պետ բ/ծ փոխգնդապետ Ա. Սեյրանյան,
ՀՀ ՊՆ 14203 զ/մ ճառագայթային ախտորոշման բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Ի. Գալստյան,
հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյան

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

11.07.2023թ., ժամը 09:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Սոնոտպիչի, գծային տվիչի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1.	«Դիավանտ» ՍՊԸ
2.	Գոհար Ալեքսանյան Մուշեղի Ա/Ձ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 **«Դիավանտ» ՍՊԸ-ի** էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, **իսկ Գոհար Ալեքսանյան Մուշեղի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթթում առկա էին միայն դիմում հայտարարությունը՝ Հավելված 1-ը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ Հավելված 1.1-ը, իսկ գնային առաջարկը՝ Հավելված 2-ը կցված չէր, ուստի գնահաող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը, որոշեց մերժել վերջինիս հայտը:**

2.3 **«Դիավանտ» ՍՊԸ-ի** հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Գնման գին	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների				
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Ախտորոշման և ռադիոախտորոշման սարքեր և նյութեր /Սոնոտպիչ/	հատ	1	500,000	1	Գնային առաջարկի բացակայություն			
2	Տվիչներ /Գծային տվիչ/	հատ	1	5,500,000	1	«Դիավանտ» ՍՊԸ	3,900,000	0	3,900,000

***Ծանոթություն՝ Գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն:**

3.2 «Դիավանտ» ՍՊԸ-ի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 «Դիավանտ» ՍՊԸ-ի հետ բանակցություն չի վարվել:

3.4 Ըստ ներկայացված տվյալներ «Դիավանտ» ՍՊԸ-ն ԱԱՀ-ն վճարող չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակցին ընտրված մասնակից ճանաչելու որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 **11.07.2023թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար **«Դիավանտ» ՍՊԸ-ին** ճանաչել ընտրված մասնակից:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով գնման ընթացակարգը՝ 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝ (ոչ մի հայտ չի ներկայացվել):

4.3 Գնահատող հանձնաժողովը հաստատեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Մաղաքյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա. Մաղաքյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/26» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:՝

Գնահատող(ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Նազարյան

Գնահատող Ա. Սեյրանյան

Գնահատող Ի. Գալստյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մաղաքյան